

Հաւատալ, եւ խոստովանել, եւ նովաւ դտանել զփրկութիւն Հոգւոց, եւ հասանիլ թողութեան մեղաց ըստ Սրբազան Առաքելոյն Պողոսի որ ասէ “սրտիւ հաւատալ յարդարութիւն, եւ բերանով խոստովանել զփրկութիւն:” Քանզի ոչ ուստեքէ հաստատեալ աւանդութիւնս այս, եթէ ոչ ի նոյն ամենատեսառնէ Քրիստոսի Աստուծոյ: Որ է-յեք փրկագործ տնօրէնութեանն, եւ փառաւոր յարութեանն, պատուիրեաց աշակերտաց իւրոց ասելով “երթայք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէք, որ հաւատայ եւ մկրտի կեցցէ, եւ որ ոչ հաւատայ դատապարտեսցի:” Չոր եւ այսու եղեալ պայմանաւ՝ կրկին նշանս կնքեալ տեսանեմք ի բարերար փրկչէն մերմէ, հաւատ եւ մկրտութիւն, ընդ որս եւ կայ պարունակեալ ամենայն աւանդութիւնք եկեղեցւոյ, որովք յայտնի ծանուցանի բոլոր խորհրդածութիւնք քրիստոնէից: Քանզի զինչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին ըստ առաքելոյ: Ըստ որում կանոնի պարտիմք հաւատալ ի Վե՛ճ ամենագոր եւ ամենակարող բնութիւն Աստուածութեանն երիս անձինս կատարեալս, եւ յատկացեալս՝ Հայր է- Որդի է- Վե՛ճ Հոգի, Հայր անշին է- ոչ յ-Վե՛ճ, եւ Որդին ծնունդ Հայրական, որպէս բան ի մտաց, եւ սուրբ Հոգին բղխումն ի Հօրէ անքննելի եւ անիմանալի, որում ոչ մեծութիւն եւ ոչ նուաստութիւն ոչ բարձր-նիւն է- ոչ խոր-նիւն, ոչ անելով արդ-երդ արիճանի ել է- եմ ան-ել-նեան է- նուազ-նիւն. այլ զոգի եւ համապատիւ, համակամ, համիշխան, համակար, համագործ, եւ համագոր, անհատ, եւ անորոշ անբաժանելի, վերացեալ բարձրացեալ ժամանակաց, եւ յաւիտենից, յանվախճան եւ յանսահման թագաւորութեան օրհնեալ յաւիտեանս ամէն:

Հաւատամք եւ ընդ նմին զմինն երից ան-